

**ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**

**ԱՆԴԻԵԱՍՅԱՆ ԹԱՄԱՐԱ ԲՈՐԻԿԻ**

**ԼԵՎՈՆ ԲԱՇԱԼՅԱՆԸ ԱՐԵՎՄՏԱՀԱՅ 80-ԱԿԱՆՆԵՐԻ ԳՐԱԿԱՆ ՇԱՐՔՄԱՆ  
ՀԱՄԱՊԱՏԿԵՐՈՒՄ**

**Ժ. 01.01 - «ՀԱՅ ԴԱՍԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ  
ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒԻ  
ԳԻՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՀԱՅՑՄԱՆ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ**

**ՍԵՂՄԱԳԻՐ**

**ԵՐԵՎԱՆ-2021**

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանի հայ բանասիրության ֆակուլտետի գիտական խորհրդում:

Գիտական ղեկավար՝

**Սաֆարյան Վազգեն Հմայակի**  
բանասիրական գիտությունների դոկտոր,  
պրոֆեսոր

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

**Դեմիրճյան Պետրոս Հակոբի**  
բանասիրական գիտությունների դոկտոր

**Սրապիոնյան Սերժիկ Գագիկի**  
բանասիրական գիտությունների թեկնածու,  
դոցենտ

Առաջատար կազմակերպություն՝

Խաչատուր Աբովյանի  
անվան հայկական պետական  
մանկավարժական համալսարան


Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2021թ. հունիսի 30-ին՝ ժամը 12<sup>00</sup> - ին, ԵՊՀ-ում գործող՝ ՀՀ ԲՈԿ-ի գրականագիտության 012 մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցեն՝ ք. Երևան, 0025, Աբովյան 52<sup>ա</sup>, ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետի մասնաշենք, 202 լսարան:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ԵՊՀ-ի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2021 թվականի մայիսի 14-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար՝



**Ա.Լ. ՄԱՎԱՐՅԱՆ**  
բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

## ԱՏԵՆԱՆՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

**Թեմայի արդիականությունը:** 19-րդ դարի ութսունական թվականները կարևորվեցին արևմտահայ մտավոր կյանքում նոր գաղափարների, կենսական ճշմարտություն արտահայտող իրապաշտական գրականության համար ընթացող պայքարով: Արևմտահայ 80-ականների գրական սերունդ անունով հայտնի մտավորականները թե՛ գրաքննադատական հողվածներով ու տեսականորեն, թե՛ գեղարվեստական գրականությամբ հակադրվեցին հին սերնդի գաղափարապաշտ, զգայացունց գրականությանը և գաղափարական մոտեցումներին: Գրականագիտության մեջ բազմաթիվ են ուսումնասիրությունները՝ նվիրված 80-ականների իրապաշտ սերնդի ներկայացուցիչներին (Ա. Արփիարյանին, Գ. Ջոհրապին, Տ. Կամսարականին, Հ. Ասատուրին, Հրանդին (Մելքոն Կյուրճյան), Սիպիլին (Ջապել Ասատուր), Ա. Չոպանյանին և այլոց): Այդ սերնդի ականավոր դեմքերից է նաև Լևոն Բաշալյանը, ում կյանքն ու գործը ներկայացնող ընդամենը երկու մենագրություն և մի քանի հողվածներ կան ցայսօր: Լիովին ուսումնասիրված չեն Բաշալյանի՝ պարբերական մամուլում սփռված հրապարակախոսական, գրական-տեսական հողվածները, գեղարվեստական արժեք ունեցող մի շարք գործեր դուրս են մնացել գրողի՝ մինչև հիմա հրատարակված ժողովածուներից: Սույն ատենախոսությունն **արդիական է**, քանի որ Լ. Բաշալյանին ներկայացնում է արևմտահայ 80-ականների իրապաշտական շարժման համապատկերում և այդ հեղինակի մասին ամբողջական գիտական խոսք ասելու փորձ է, որը կընդլայնի մեր գրականության պատմության մի կարևոր ժամանակահատվածի գեղարվեստական զարգացումների շուրջ պատկերացումները:

**Հետազոտության նպատակն ու հիմնախնդիրները:** Ուսումնասիրության **նպատակն է** ցույց տալ Լ. Բաշալյանի դերակատարությունն արևմտահայ իրապաշտական գրական շարժման մեջ: Ժամանակի գրականության համար թեմատիկ-բովանդակային, գաղափարական, գեղագիտական ինչ լուծումներ է առաջարկել գրողը, իր ստեղծագործություններում ինչպե՞ս է կիրառել «կյանքը ինչպես որ է» գեղագիտական սկզբունքը, ստեղծագործական կյանքի ավելի ուշ շրջանում ինչ փոփոխություններ է կրել Բաշալյանի գեղարվեստական մտածողությունը:

Ուսումնասիրության **հիմնախնդիրներն են՝**

1. արևմտահայ գրական գործընթացում կարևորել 1880-ականների գրական շարժման բնական անհրաժեշտությունը, որը նպաստեց գաղափարապաշտական գրականությունը հասարակական կյանքի տարբեր անկյունները թափանցող իրապաշտական գրականությամբ փոխարինելուն,

2. առանձնացնել պատմաքաղաքական իրադարձությունների ազդեցությունը արևմտահայ 80-ականների գաղափարական հայացքների վրա, որն արտահայտվեց նաև նրանց գեղարվեստական գործերում,
3. արևմտահայ իրապաշտ շարժման մեջ առանձնացնել պոլսահայ մամուլի «Արևելք», «Մասիս» պարբերականների և հատկապես «Հայրենիք» օրաթերթի նշանակությունը,
4. քննել և բնութագրել իրապաշտական գրականության առանձնահատկությունները, դրանց դրսևորումները Լևոն Բաշալյանի արձակում՝ համեմատության մեջ դնելով իրապաշտ սերնդի մյուս ներկայացուցիչների գեղարվեստական գործերի հետ,
5. բացահայտել Լ. Բաշալյանի գեղարվեստական արձակում հանդիպվող կերպարների հոգեբանական առանձնահատկությունները, հոգեկերտվածքային փոփոխությունները՝ պայմանավորված միջավայրային և ներանձնային գործոններով:

**Առենախոսության գիտական նորույթը:** Աշխատանքի բերած կարևոր նորությունը Լ. Բաշալյանի գրական գործունեության համապատկերային վերլուծությունն է, որը իրականացվել է գրողի՝ պարբերական մամուլում սփռված գրականագիտական և հրապարակախոսական հոդվածների, գեղարվեստական երկերի՝ 80-ականների սերնդի այլ ներկայացուցիչների նմանօրինակ գործերի հետ զուգադիր քննությամբ: Աշխատանքում **առաջին անգամ** անդրադարձ է կատարվում Լ. Բաշալյանի խմբագրությամբ Փարիզում 1928-1932թթ. լույս տեսած «Լը ֆուայե» պարբերականին. սա օգնում է ամբողջացնելու գրողի՝ հրապարակախոսական ու գրականագիտական հայացքների շուրջ եղած պատկերացումները:

Աշխատանքի **գիտական նորույթը** նաև գրողի ստեղծագործությունների՝ արդի գրականագիտական հայացքների կիրառմամբ գեղարվեստական ու գաղափարական վերլուծության փորձն է, ինչպես նաև կերպարների հոգեբանության բացահայտման ժամանակ հոգեվերլուծական դպրոցի ներկայացուցիչների կողմից առաջարկվող տեսական դրույթների կիրառումը, ինչը թույլ է տալիս առանձնացնելու գրողի կերպարակերտման արվեստի յուրահատկությունները:

**Աշխատանքի մեթոդաբանությունը:** Ուսումնասիրությունը կատարելիս կիրառվել են պատմահամեմատական, տիպաբանական, պատկերահամատեքստային, հոգեվերլուծական մեթոդները՝ հենվելով հայ և օտար գրականագիտության ձեռքբերումների և առկա կարծիքների վրա:

**Առենախոսության կառուցվածքը:** Աշխատանքը 158 էջ է, բաղկացած է ներածությունից, երկու հիմնական գլուխներից՝ համապատասխան ենթագլուխներով, եզրակացություններից և օգտագործած գրականության ցանկից:

**Ներածության մեջ** անդրադարձել ենք հարցի պատմությանը, Լևոն Բաշալյանի ստեղծագործությունների համապատկերային դիտարկման անհրա-

ժեշտությանը, հիմնավորել ենք աշխատանքի արդիականությունը, նպատակն ու հիմնախնդիրները, գիտական նորույթը, մեթոդաբանական հիմքը, մատնանշել տեսական և գործնական նշանակությունը:

## ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

### ԼԵՎՈՆ ԲԱՇԱԼՅԱՆԸ՝ ԱՐԵՎՄՏԱՀԱՅ 80-ԱՎԱՆՆԵՐԻ ԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՇԱՌԱՎԻՂՆԵՐՈՒՄ

#### 1.1 ԼԵՎՈՆ ԲԱՇԱԼՅԱՆԻ ԿՅԱՆՔԸ և ԳՈՐԾԸ Կ. ՊՈԼՍՈՒՄ («ԱՐԵՎԵԼՔ», «ՄԱՍԻՍ», «ՀԱՅՐԵՆԻՔ»)

Այս ենթագլխում ներկայացվում է Լևոն Բաշալյանի գործունեությունը Կ. Պոլսում, գրական առաջին քայլերը «Մասիս» օրաթերթում, որտեղ մի քանի ամիս թարգմանական աշխատանքներով զբաղվող գրողի համար վճռորոշ է լինում օրաթերթի միավորումը «Արևելք»-ի և ծանոթությունը Արփիար Արփիարյանի հետ:

1884թ. հունվարի 1-ին Արփիար Արփիարյանի խմբագրությամբ լույս տեսավ «Արևելք»-ը՝ Կ. Պոլսի առաջադիմական մամուլի առաջնեկը: «Արևելք»-ը դարձավ այն ասպարեզը, որտեղ 80-ականների գրական սերունդը սկսեց իր գաղափարական պայքարը՝ հասարակության գիտակցության բարձրացման, կյանքը ճշմարտացի և անկողմնակալ դիրքերից ներկայացնելու համար:

1884թ. հուլիսի 1-ին ֆինանսական դժվարությունների պատճառով «Արևելք»-ին է միանում «Մասիս» օրաթերթը: Չնայած «Մասիս»-«Արևելք» միավորումը պայմանավորված էր միայն նյութական խնդիրներով, բայց այն նպաստավոր եղավ պոլսահայ առաջադեմ մտավորական ուժերի՝ նույն խմբագրատանն աշխատելով համագործակցելու և միավորվելու առումով:

Արևմտահայ իրականության մեջ իրապաշտական գրականության հաստատման համար 1880-ականներին ընթացող պայքարը նախորդ տասնամյակում արդեն նախանշվել էր Հ. Պարոնյանի երգիծական ստեղծագործություններում և տեսական մոտեցումներում: Պատահական չէ, որ ավելի ուշ՝ 1880-ականներին, արևմտահայ իրականության մեջ մեծ հնչեղություն ստացած, տարբեր գրական ուղղությունների հետևող Ս. Տյուսաբի «Մայտա» (1883) և Տ. Կամսարականի «Վարժապետին աջիկը» (1888) վեպերի առիթով Պարոնյանը արտահայտեց իր հեղինակավոր կարծիքը՝ առաջինում անհամոզիչ համարելով գլխավոր հերոսուհու՝ Մայտայի կերպարը, քննադատելով վեպը նաև ռոմանտիկական միակողմանիության, վերամբարձ ոճի ու լեզվի համար, իսկ երկրորդի հեղինակին դրվատանքի խոսքերի արժանացրեց:

«Արևելք»-«Մասիս» միացյալ թերթը գրկաբաց ընդունեց նոր գրողներին, ովքեր իրենց գրականության համար նյութ դարձրին ազգային կյանքը, հայ մարդու հոգսերը՝ հոգեբանական թափանցումներ կատարելով մարդկային հո-

գու ամենախոր անկյունները: Նրա էջերում հատված առ հատված տպագրվեցին այս շրջանի գրողների նորավիպագրության առաջին փորձերը<sup>1</sup>, որոնց միջոցով իրապաշտական գրականության անհրաժեշտության շուրջ առաջ քաշված տեսական հայեցակետերն ստանում էին իրենց հիմնավորումները:

Լ. Բաշայանն այստեղ հրատարակում է ազգային կյանքը լուսաբանող մի շարք հոդվածներ, նրա թարգմանությամբ հրատարակվում են ռուս և եվրոպական գրողների մի քանի գործեր, հետաքրքրական ուսումնասիրություններ՝ նվիրված Ֆ. Դոստոևսկուն, Իվ. Տուրգենևին, Վ. Հյուգոյին, բայց ամենաուշագրավը 1886-ին հրատարակած նրա «1885 տարին Թուրքիո հայ գրականության համար» վերնագրով հոդվածն էր, որտեղ ներկայացվել են արևմտահայ գրականության՝ մեկ տարվա ընթացքում ունեցած ձեռքբերումներն ու թերացումները:

Բաշայանի ուշադրության կենտրոնում միայն արևմտահայ գրական զարգացումները չէին, նա հետաքրքրված էր նաև արևելահայ գրական կյանքով: Այդ են վկայում Մկրտիչ Բարխուդարյանի «Հանդես գրականական և պատմական» վերտառությամբ գրքի վերաբերյալ երկու հոդվածները, որոնցում արտահայտում է իր անկողմնակալ ու հստակ տեսակետը հանդեսում տեղ գտած գեղարվեստական ստեղծագործությունների մասին: Իր գաղափարակից ընկերների՝ Ա. Արփիարյանի, Գ. Ջոհրայի, Տ. Կամսարականի, Հրանդի, Հ. Ասատուրի, Ա. Չոպանյանի և այլոց հետ Բաշայանը ևս անհրաժեշտություն համարեց անխզելի դարձնել գրականության և իրականության կապը, գրականության համար առաջնային համարել ոչ թե ձևը, այլ բովանդակությունը:

1890թ. հոկտեմբերի 20-ին «Մասիս» երկշաբաթաթերթի փակումից, նրա խմբագիր Ա. Արփիարյանի ձեռքակալությունից ու Լ. Բաշայանի՝ Եվրոպա (Փարիզ) հեռանալուց հետո Կ. Պոլսում գրական-մշակութային կյանքը նոր թափ է ստանում «Հայրենիք» օրաթերթի հրատարակությամբ: 1880-ականներին «Մասիս», «Արևելք» պարբերականներում իրենց գրական պայքարը սկսած հեղինակներին ավելի ուշ՝ 1891թ., իր շուրջը պիտի ժողովեր Հովհ. Շահնազարի հիմնադրած «Հայրենիք» օրաթերթը, որը, գլխավոր խմբագիր Ա. Արփիարյանի ձևակերպմամբ, «...եթե պիտի ըլլայ ապարանքի թերթը, պիտի ըլլայ նամանաւանդ խրճիթին թերթը. եթե պիտի ըլլայ զարգացեալին թերթը, պիտի ըլլայ

---

<sup>1</sup> 1883թ. «Արևելյան մամուլում», այնուհետև նույն թվականին՝ առանձին գրքով, տպագրվում է Թագուհի Շիշմանյանի «Գարնան մի ասուպ» ստեղծագործությունը՝ «Օրիորդ Մենիկ» գրական կեղծանունով: «Գարնան մի ասուպը» Թ. Շիշմանյանը անվանել է նորավեպ: Դրանից հետո, փաստորեն, հայ գրականության մեջ սկսվեցին «նորավեպ» եզրի լայն կիրառություններն ու գրական այդ տեսակի ինքնուրույն առաջխաղացումները: Այս մասին ավելի մանրամասն տե՛ս **Մակարյան Ա.**, Թագուհի Շիշմանյան՝ արևմտահայ գրականության կորուսյալ ասուպը. «Վեմ» համահայկական հանդես, թիվ 4, Երևան, 2010, էջ 26,28:

նամանաւանդ մտքով յետամնացին թերթը»<sup>2</sup>: Ա. Արփիարյանի գաղափարական այս սկզբունքները կիսում էին նաև արևմտահայ մյուս ութսունականները: Բաշայանը ևս պիտի առաջնային համարեր առանց «փտած ու մաշված ածականների», «ծթած դարձվածքների», պարզ, անպաճույճ, բայց ժողովրդի սրտին ու մտքին հարազատ գրականություն ունենալու անհրաժեշտությունը:

Նույն մոտեցմամբ Հ. Ասատուրը նոր գրականության կարևոր կողմերից մեկը պիտի համարեր այն, որ նա «աւելի մօտէն կը քննէ ժողովուրդին կեանքը»: Լինելով «Հայրենիք»-ի գրական բաժնի պատասխանատու խմբագիրը՝ Բաշայանը բարձր պատասխանատվությամբ էր կատարում իրեն վստահված աշխատանքը, միաժամանակ հրատարակում նոր գրականության շահերը պաշտպանող բազմաթիվ գրական-տեսական հոդվածներ: Գրողի հեղինակած «Մտքին ու դրամին պայքարը», «Եփեսոսի մանկանց ութերորդը», «Կեանքը ինչպէս որ է իրօք», «Կեղծ գրականութիւն», «Խոհարար եւ վիպասան», «Գրելէ առաջ», «Սխալ գրականութիւն» հոդվածները նշվածի փայլուն արտահայտություններն են: «Հայրենիք»-ի էջերում նաև Լ. Բաշայանի, Ա. Արփիարյանի, Գ. Ջոհրապի, Տ. Կամսարականի կողմից արևմտահայ և արևելահայ գրականությունների միջև զուգակշիռ անցկացնելու փորձեր են նկատվում:

Լ. Բաշայանի ուշադրության կենտրոնում էր նաև ազգային, հասարակական կյանքը: Իր հրապարակախոսական հոդվածներում անդրադարձել է հասարակությանը մտահոգող տարաբնույթ հարցերին՝ պատրիարքության, հոգաբարձուների խորհուրդների ընտրություններին, Հանրային հիվանդանոցում տիրող վիճակին, կրթությանը, կանանց իրավունքներին և այլն:

## **1.2 ԼԵՎՈՆ ԲԱՇԱՆՅԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՌՈՒԹՅՈՒՆԸ ԼՈՆԴՈՆՈՒՄ ԵՎ ՓԱՐԻՋՈՒՄ. «ՆՈՐ ԿՅԱՆՔ», «ԼԸ ՖՈՒԱՅԵ» («ՕՋԱԽ») ՊԱՐԲԵՐԱԿԱՆՆԵՐԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ**

Այս ենթագլխում հեղինակն անդրադարձել է Լ. Բաշայանի գրական գործունեության մի քանի տարիներին Լոնդոնում, որտեղ Ա. Արփիարյանի և նրա ջանքերով լույս էր տեսնում «Նոր կյանք», այնուհետև՝ երկարամյա դադարից հետո Փարիզում նրա խմբագրությամբ լույս տեսնող «Լը ֆուայե» երկշաբաթաթերթին:

Հայրենիքից հեռու՝ մառախլապատ Լոնդոնում, Արփիարյանն ու Բաշայանը գերմարդկային ջանքերով իրականացնում են «Նոր կյանք»-ի հրատարակումը: Չնայած «Նոր կյանք»-ը Հնչակյան կուսակցության օրգանն էր, բայց այն քաղաքական միտումներից դուրս ուներ նաև գրական ուղղվածություն:

Պարբերականի առաջին համարում հրատարակվում են Լ. Բաշայանի (Լևոն Ջարթումյան կեղծանվամբ) «Կաղանդ» նորավեպը՝ հայկական ջարդերը

---

<sup>2</sup> «Հայրենիք», 1891, թիվ 1, էջ 1:

ներկայացնող ինքնատիպ գործը, Ա. Չոպանյանի «Օրոր» բանաստեղծությունը: Հետագայում տպագրվում են նաև Մարի Սվաճյանի, Արփիար Արփիարյանի նորավեպերը, Վահրամ Սվաճյանի մի շարք բանաստեղծություններ, Միքայել Կյուրճյանի (Պարոյր) «Մարտիկ աղա» վեպը, Ե. Օտյանի «Հեղափոխության մակարոյծները» և այլ գործեր: «Նոր կյանք»-ում գրողի «Օրուան քաղաքականությունը», «Կապոյտ գիրք», «Թիրքիոյ չորս կողմը», «Ասիական Թիրքիոյ մէջ (Ճամբորդութեան մը նօթեր)», ««Բարենորոգումներուն» գործադրութիւնը հայկական վեց նահանգներուն մէջ» հոդվածները հիմնականում քաղաքական բովանդակություն ունեն: «Կաղանդ» նորավեպը, «Հայ ցեղը», «Հայրենի հողը» գրույց-խորհրդածությունները օտարության մեջ հայտնված հայի ապրումների, պայքարելու և վերածնվելու անհրաժեշտության շուրջ գրողի գաղափարներն են ներկայացնում:

Լ. Բաշայանի խմբագրությամբ Փարիզում 1928-32թթ. լույս տեսած «Լը ֆուայե» («Օջախ») ֆրանսերեն-հայերեն երկշաբաթաթերթում տեղ գտած նյութերն առհասարակ դուրս են մնացել գրականագետների ուսումնասիրության շրջանակներից: Պատճառներից մեկը կարող է լինել Հայաստանի գրապահոցներում շաբաթաթերթի բացակայությունը<sup>3</sup>: Այդ են վկայում Բաշայանի կյանքն ու գործն ուսումնասիրած գրականագետներից մեկի՝ Սարիբեկ Մանուկյանի հետևյալ տողերը. «Դժբախտաբար մեր ձեռքի տակ չի եղել այդ ամսաթերթի ամբողջ համալիրը, և առայժմ չենք կարող ասել, թե «գրական կյանքի» այդ շրջանում որքանո՞վ է բեղմնավոր եղել գրողի գրիչը և ի՞նչ է արտադրել»<sup>4</sup>: Պարբերականը իր ուղղվածությամբ հակասություններ ուներ նաև խորհրդային գաղափարախոսության հետ, ինչն էլ կարող էր լինել գրասեր հանրությանը անմատչելի մնալու երկրորդ պատճառը:

«Լը ֆուայե» («Օջախ») երկշաբաթաթերթում գրողի հեղինակած նյութերի քննությունը ցույց է տալիս, որ այստեղ Լ. Բաշայանի գրչին պատկանող գեղարվեստական գործեր չկան, սակայն նա ժամանակի քաղաքական ու հասարակական կյանքը լուսաբանող, հայ գրական կյանքում տեղի ունեցող փոփոխություններին անդրադարձող մի շարք հոդվածներ է հրատարակել: «Տիկին Զապել Եսաեանի նոր գիրքը», «Նահանջ առանց երգի (Վէպ Շահան Շահնուրի)» վերտառությամբ հոդվածներում Բաշայանը մեծ ոգևորությամբ է արտահայտվում Զաբել Եսայանի հերթական մեծածավալ գործի՝ «Պրումբէոս ազատագրուած»-ի մասին, ողջունում երիտասարդ հեղինակի՝ Շահան Շահնուրի մուտքը գրական ասպարեզ և մեծ ապագա կանխատեսում նրա համար:

<sup>3</sup> Հայաստանի ազգային գրադարանի աջակցությամբ մեզ հաջողվել է պարզել, որ շաբաթաթերթի համարները պահվում են Փարիզի Նուբարյան մատենադարանում: Մատենադարանի տնօրեն Բորիս Աճեմյանի հետևողականությամբ թվայնացվել են «Լը ֆուայե»-ի բոլոր համարները և այժմ հասանելի են ընթերցողներին և ուսումնասիրողներին:

<sup>4</sup> Տե՛ս Մանուկյան Ս., Լևոն Բաշայան, Երևան, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1969, էջ 30:



Գնահատանքի արժանացնելով Չաբել Եսայանի՝ հայ գրականության զարգացման գործում ներդրած ջանքերը՝ Բաշայանը գտնում է, որ նա «...միակն է այսօր արեւմտեան հայ գրականութեան փառքերէն, որ երկարաշունչ աշխատութիւններով տարուէ տարի կը ճոխացնէ զայն...»<sup>5</sup> : Շահնուրի գործը, իբրև առաջնեկ, նրբանկատ Բաշայանի կարծիքով, զերծ չէ թերություններից. «Եթէ սակայն գործը մաղէ մը անցնես, եթէ ազատի ան իր խիճերէն, շիղերէն, խեշերանքէն, մնացածը...մնացածը արժէքատու քարերու հոյլ մըն է, կենդանի պսպղումներով...»<sup>6</sup>:

Պարբերականում Բաշայանը զայրույթով ու մեծ ցավով է խոսում Խորհրդային Հայաստանում իրականացված հերթական բռնությունների դեմ. լրտեսության մեղադրանքով գնդակահարվել էր Մինաս Չերագի եղբորորդի Ներսես Չերագը, կաթոլիկություն տարածելու մեղադրանքով ձերբակալվել էր Վիեննայի Մխիթարյաններից Հ. Ակինյանը: Ու Բաշայանին մնում է ասել. «Կը մաղթէիք որ Հայաստանի վարիչները կարենային ըսել թե խղճերնին հանդարտ է այս մասին»<sup>7</sup>:

Խորհրդային գրական քննադատությունը չի անդրադառնում «Լը ֆուայե»-ում Լ. Բաշայանի կողմից Խորհրդային Հայաստանի մասին արտահայտած բացասական գնահատականներին: Այս իրողությունը կարող ենք բացատրել կամ Հայաստանում «Լը ֆուայե»-ի համարների բացակայությամբ, կամ գրաքննությամբ: Լ. Բաշայանը պարբերականը հրատարակում է մինչև 1932թ. մարտ ամիսը, և չնայած ֆրանսահայության համար ունեցած նրա մեծ դերակատարությանը՝ այն փակվում է:

## ԳԼՈՒԿ ԵՐԿՐՈՐԴ

### ՍՈՑԻԱԼ- ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՇԵՇՏԱԴՐՈՒՄՆԵՐԸ 80-ԱԿԱՆՆԵՐԻ ՍՏԵՂՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

#### 2.1 ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐՈՎ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ՝ ՄԱՐԴԿԱՅԻՆ ՃԱԿԱՏԱԳՐԵՐԻ ԽԵՂԱԹՅՈՒՐՄԱՆ ԱՐՏԱՑՈՒՄՆԵՐԸ

Այս ենթագլխում ներկայացվում են Լևոն Բաշայանի որոշ գործերում արտահայտված սոցիալական շեշտադրումները, որոնք օրինաչափորեն բխում էին «պատկերել կյանքը ինչպես որ է» գեղագիտական դրույթից: Բաշայանը, ինչպես իր սերնդակից մյուս գրողները, չէր կարող չանդրադառնալ հասարակության, հատկապես հայ ժողովրդի համար առանցքային դարձած սոցիալական խնդիրներին, դասակարգային անհավասարությանը: Նույն հարցադրումները

<sup>5</sup> “Le foyer”, Paris, 1929, N<sup>o</sup>-15, p. 4.

<sup>6</sup> “Le foyer”, Paris, 1929, N<sup>o</sup>-24, p. 4.

<sup>7</sup> “Le foyer”, Paris, 1929, N<sup>o</sup>-5, p. 4.

գուգահեռաբար դիտարկվել են նաև Գ. Զոհրապի, Ա. Արփիարյանի, Ա. Չոպանյանի, Սիպիլի գործերում՝ ընդգծելով նրանցից յուրաքանչյուրի կերպարակերտման արվեստի առանձնահատկությունները, գաղափարական հարցադրումների առումով նկատելի տարբերություններն ու նմանությունները: Ուշագրավ է, որ քննվող հարցին Բաշալյանը տալիս է համամարդկային նշանակություն՝ գրականություն բերելով կերպարներ ոչ միայն հայկական, այլև օտար միջավայրից:

Սոցիալական ծանր պայմանների մեջ լուռ տառապող կնոջ ճակատագրին է անդրադառնում Բաշալյանը իր «**Դրացուհին**», «**Երկու կիներ**», «**Կաղանդչեքը**», «**Զարթոնք**» նորավեպերում: Այս գործերում ներկայացված կանանց ճակատագրերը տարբեր սկիզբ և ընթացք ունեն, բայց բոլորին միավորում է մի ընդհանուր խնդիր՝ աղքատությունը:

«**Հացը**» պատկերում և «**Նոր զգեստը**» նորավեպում սոցիալական շեշտվածությունն ավելի է մեծանում, որովհետև մատնանշվում է, որ նույնիսկ ազնիվ աշխատանքով ապրող գործավորը չի կարողանում հոգալ իր և ընտանիքի կարիքները: «**Ձրի**», «**Կաղանդչեքը**» պատմվածքներում շոշափվում է այն հարցը, որ դրամատիկական միջավայրում բնատուր տաղանդով օժտված լինելը բավարար չէ հաջողությունների հասնելու համար: Ե՛վ Հակոբը, և՛ «**Ձրի**» պատմվածքի անանուն տղան հրաժարվում են կրթություն ստանալու իրենց մտադրությունից, որովհետև նրանց հանդեպ անողորք են աղքատությունն ու կարիքը:

«**Դիտողութիւնք եւ դատողութիւնք**» ընդհանուր խորագրով երկու գործերում խնդիրը ներկայացվում է երկբևեռ դաշտում՝ առաջին գործում սուր հակադրություն ստեղծելով ածուխի կտորներ հավաքող փոքրիկ տղայի ու հարուստ տանտիրոջ, իսկ երկրորդում՝ ցավից տնքացող համալի ու բժշկի կերպարների միջև:

Այս ենթագլխում քննվել են նաև «**Խաչախճին**» և «**Ղալաթիո «Ռեսդ»-ը**» գործերը: «Խաչախճին» պատմվածքը ներկայացվել է Գ. Զոհրապի «Այինկա» նորավեպի հետ գուգահիթ քննությամբ: Նշվել է, որ հարցին հեղինակների մոտեցումները տարբեր են, չնայած նրան, որ երկուսն էլ իրենց համար սկզբունք են դարձրել պատկերել «կյանքը ինչպես որ է»: Եթե Բաշալյանը ճիշտ ճանապարհից շեղումը կապում է հատկապես սոցիալական խնդրի հետ, ապա Զոհրապը այս գործում ներկայացնում է համատարած անարդարության և անհավասարության մթնոլորտում սեփական օրենքներով կյանքը արժևորելու և դրանցով առաջնորդվելու տեսակետը:

«Ղալաթիո «Ռեսդ»-ը» պատմվածքում սոցիալական խնդիրների հետ միասին Բաշալյանը շոշափում է նաև ժամանակաշրջանի համար կարևորագույն հարցերից մեկը՝ հայ առաքելական եկեղեցուց դուրս այլախոհության առաջանալը՝ ի դեմս հայ բողոքականների:

## 2.2 ԴՐԱՄԻ ԱՊԱԿԱՆԱԾ ԱՇԽԱՐՀՈՒՄ

Այս ենթագլխում դիտարկված են հասարակության մեջ օրեցօր ակնհայտ դարձող դասակարգային շերտավորումների, փողի իշխանության զորացման հետևանքների, պոլսահայ բարձր հասարակության «բարոյապաշտ», «սրբակենցաղ» վարք ու բարքի պատկերումները: Դասային անհավասարության, այդ հողի վրա ձևավորված անհաջող ամուսնություններին ու այս ամենի մեջ տառապող մարդու խնդիրներին է Բաշայանն անդրադարձել իր «**Հմայաթափ**» նորավեպում և «**Ա՛յս է եղեր**», «**Անժել**», «**Վերջին համբույրը**» պատմվածքներում: Խնդրին անդրադարձումները տեսնում ենք նաև Ա. Արփիարյանի նորավեպերում և պատմվածքներում («Ապուշը», «Կատակ մը», «Երագի մը գինը», «Հոգու զավակը»), Գ. Զոհրապի մի շարք նովելներում («Թեֆարիկ», «Փոստալ», «Սառա»):

«Հմայաթափ»<sup>8</sup> նորավեպում Բաշայանը ներկայացնում է պոլսահայ կյանքից մի դրվագ՝ ընդգծված կերպով շեշտադրելով «վերին» և «ստորին» խավերի հակասություններով պայմանավորված անհատի տառապանքը, հասարակությունից և միջավայրից մեկուսացումը: Տալով երկու հակադիր հարթակներում կանգնած մարդկանց նկարագիրը՝ Գևորգի, ով աղքատ ընտանիքից էր և ուսուցչությամբ էր վաստակում իր հացը, և տիկին Զյունպուլյանի, ով քաղաքի մեծահարուստ կանանցից էր, այդ հակադրության ֆոնին բացազատում է դրամատիկական հասարակության արատավոր կողմերը, ցուցահանում հասարակության ավելի «բարձր» շերտերում «մարդ» տեսակի ոչնչացման խնդիրը:

«Ա՛յս է եղեր» պատմվածքում Մառի Սիմյանի կերպարով հեղինակը մերկացնում է պոլսահայ հարուստ կանանց վարած զեխ ու շվայտ կյանքը: Պատմվածքում ուշագրավ են նաև Պողոս էֆենդուն տրված բնութագրումները, որտեղից պարզ է դառնում այն մտայնությունը, որ կնոջ այդպիսին լինելու մեջ իր բաժին մեղքն ունի նաև ամուսինը՝ Պողոս էֆենդին, ով, միայն մտահոգված լինելով իր զբաղեցրած պաշտոնով ու նյութական բարեկեցությամբ, անտեսում է հասարակության կողմից իրեն տրվող բնորոշումները՝ «Ապուշի մեկը», «Փիլիսոփա մարդ»:

Նույն մոտեցմամբ Գ. Զոհրապը «Փոստալ», «Թեֆարիկ» նովելներում, նկարագրելով բարձր հասարակության մեջ տիրող կարծրատիպային մոտեցումները, կեղծ բարեպաշտությունը, աղքատի ճակատագրի հանդեպ ցուցաբերվող անտարբեր ու անփոյթ վերաբերմունքը, նկատելի է դարձնում գավառացի աղքատ կնոջ ու պոլսահայ «ազնվաշուքների» միջև առկա հոգեկերտվածքային տարբերությունները:

«**Վերջին համբույրը**», «**Անժել**» պատմվածքներում Բաշայանի ուշադրության կենտրոնում պոլսահայ առևտրական խավն է, վաճառատան աշխատա-

---

<sup>8</sup> Հմայաթափ»-ը Լ. Բաշայանի անդրանիկ նորավեպն է, լույս է տեսել 1888թ.՝ «Մասիս» շաբաթաթերթի 3920 համարում:

կիցները, որոնք չնայած չափազանց հարուստ չեն, բայց կարծես հասկացել են դրամատիրական հասարակության առաջադրած պահանջները: Վերջինները կարծում են, որ սեփական զավակների ապագան հոգալու համար անհրաժեշտ է առաջին հերթին մտածել նրանց նյութական բարեկեցության մասին:

Բաշայանի վերոնշյալ գործերում նկատելի է «հայրեր և որդիներ» բախումը: Հարկ է նշել, որ Լ. Բաշայանը Իվ. Տուրգենևի մասին հանդես է եկել հողվածով, որտեղ արտահայտված են այդ հարցի շուրջ նրա մտտեցումները: Եթե Տուրգենևի գործերում «հայրեր և որդիներ» բախումը ակնհայտ է, նոր սերնդի դիմադրությունը իր ուրույն արտահայտությունն է գտնում կերպարների գործողություններում, հատկապես կերպարներից մեկի՝ Բազարովի՝ ամեն ինչ ժխտելու նիհիլիստական հայացքներում, ապա Բաշայանի պատմվածքներում հակազդումը նշմարվում է, բայց վերջնական նպատակին չի ծառայում: Բաշայանի կերտած կերպարների մեջ դա ավելի շատ անձնային է, քան գաղափարական:

Ցուցադրելով հասարակական հարաբերություններում փողի ազդեցությամբ առաջացող հակասությունները՝ Բաշայանը ընդգծում է մարդու կամային հատկանիշների նշանակությունը: Կերպարներից մի քանիսը լուռ հնազանդվում են, մյուսների մեջ նկատվում են ընդվզման, բողոքի արտահայտություն, որը, սակայն, այնքան թույլ է, որ էականորեն ոչինչ չի փոխում:

### **2.3 ՊԱՆԴԻՏՈՒԹՅՈՒՆԸ՝ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՈՒ ԱԶԳԱՅԻՆ ՈՂԲԵՐԳՈՒԹՅՈՒՆ**

Այս ենթագլուխը նվիրված է ժամանակի կարևորագույն խնդիրներից մեկի՝ գավառներից մեծ քաղաքներ շարունակական դարձած պանդուխտների հոսքի պատկերման քննությանը:

Արևմտահայ իրապաշտները խնդրին անդրադառնում էին ոչ միայն հրապարակախոսության մեջ, այլև գեղարվեստական գրականությամբ: Պատահական չէ, որ Ա. Արփիարյանի խնդրանքով Հրանդը (Մելքոն Կյուրճյան) «Մասիսի» համարներում սկսում է հրատարակել հայ պանդուխտների կյանքից իր ակնարկաշարը<sup>9</sup>: Պանդուխտության ցավալի հարցի անդրադարձումները տեսնում ենք նաև արևմտահայ ութսունականների գրական սերնդի մյուս ներկայացուցիչների՝ Գ. Զոհրապի («Այրին») և Տ. Կամսարականի («Հարո») նորավեպերում: Թեման տեղ է գտել նաև Լ. Բաշայանի արձակում՝ «Փափուկ մարդիկ», «Սյուզենի վարպետ» պատմվածքներում և «Միջերկրականի հիշատակներ» ուղեգրության «Վրանին տակ» գլխում, նաև՝ «Հայրենիք» օրաթերթում հրատարակած մի քանի հոդվածներում:

---

<sup>9</sup> Տե՛ս Հրանդ (Մելքոն Կիրճեան), Ամբողջական երկեր. Պանդուխտի կեանքէն, Փարիզ, Նահատակ գրագէտներու բարեկամներ, 1931, էջ 14:

Գավառից Պոլիս ժամանած մի ընտանիքի պատմություն է ներկայացվում «Փափուկ մարդիկ» գործում: Որպեսզի հասկանալի դառնա, թե Կ. Պոլսում ինչ դժվարությունների, զրկանքների է հանդիպում գավառացի հայը, Բաշալյանը ստվերագծում է այն դատողությունը, որ եղբայրն ու հորեղբայրը չեն շտապում Պողոսին աշխատանքի դնել այն հոգաժողովամբ, որ մի փոքր էլ երկարաձգեն «արծակ օդի և արծակ դաշտերու վարժված» երիտասարդի «այտերու կարմիրը»:

Պանդխտության թեման կրկին շոշափվում է «Միջերկրականի հիշատակներ» ուղեգրություն «Վրանին տակ» գլխում: Դժվար չէր նավի տախտակամածի բազմության մեջ գտնվող երեք երիտասարդների արտաքին տեսքից անմիջապես կռահել վերջիններիս ով լինելը: Գրողը իր գուշակելու շնորհը բացատրում է այսպես. «Երբ որ Մարսիլիո շոգենավի մը վրա, աղտոտ անկողնի մը քով երկնցած կգտնեք մարդ մը, որ, ֆեսը գլխին, վայրահակ կմնա, տխուր, չորս կողմը անցածին դարձածին անտարբեր, մեկի դեմ հարյուր գրավ դրեք, որ հայ մըն է ան, ու խարբերոցի հայ մը, որ Ամերիկա կերթա կամ անկից կդառնա»<sup>10</sup>:

Այս փոքրիկ մեկնաբանությունը բավականացնում է հասկանալու, որ օտար հողում բախտ, աշխատանք որոնելը հայը կատարում է պարտադրաբար, և որ շատ քչերին է հաջողվում հասնել իրենց նպատակին. սա ևս փաստ է, որովհետև և՛ գնացողը, և՛ վերադարձողը ունեն նույն արտաքին տեսքը՝ մտամոլոր, գլխահակ:

Բաշալյանի արձակում նկատելի է նաև մեկ այլ գիծ. այն, որ կամք և տրկունություն ցուցաբերելու դեպքում կարելի է հասնել հաջողության («Սյուզենիի վարպետ», «Հոգեկան ուժ»): Նշված գործերում ընդգծվում է, որ հայ կինն օժտված է նեղության մեջ չընկճվելու, կյանքի պարտադրած դժվարությունները կամքի ուժով, հնարագիտությամբ, համառ աշխատանքով հաղթահարելու կարողությամբ: Որևէ մասնագիտության մեջ նա հմտանում է, դառնում անմրցելի վարպետ և ազնիվ աշխատանքով, թեկուզև համեստ վաստակով, բայց արժանապատվությամբ պահում է իր տունն ու յուրայիններին:

Գեղարվեստական ինքնատիպ լուծումներով Լ. Բաշալյանին հաջողվել է մանրակերտել իր հող ու ջրից զատված, իր կամքին հակառակ դրամատիրական հասարակության հորձանուտը նետված գավառացի մարդու հոգեբանությունը:

## 2.4 ԿԵՐՊԱՐՆԵՐԻ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ

Չնայած արևմտահայ ութսունականները պատկերում էին հասարակական կյանքը՝ բազմաբովանդակ փոփոխություններով, սակայն առանցքում պահում

---

<sup>10</sup> Թվատիսցի. Լևոն Բաշալյան. Առանձար, Երկեր, Երևան, «Սովետական գրող» հրատարակչություն, 1982, էջ 364:

էին մարդուն՝ իր ներաշխարհի և սոցիումի հետ ունեցած հարաբերություններով: Բաշայանը փոքրաքանակ ստեղծագործություններում ներկայացրել է տարբեր սոցիալական հարթություններում ու կենսապայմաններում հայտնված մարդկանց հոգեբանությունը: Այս ենթազվխում կերպարների հոգեբանական, խորքային վերլուծություններ իրականացնելու համար օգտագործվել է վերլուծական հոգեբանության փորձը՝ վկայակոչելով Ջ. Ֆրոյդի, Կ. Յունգի կարծիքները: Հասարակական հարաբերություններում ընկճված, մեկուսացած բնավորության գծեր ցուցաբերող կերպարների գործողությունները պատճառաբանվել են սոցիալական միջավայրի դերակատարությամբ ու անձնային հատկանիշներով: Օրինակ՝ «Հմայաթափ» նորավեպի կերպարներից Գևորգի բնավորության ինչ-ինչ գծեր բացահայտելու համար օգտագործել ենք Կ. Յունգի կողմից առաջարկվող **էքստրավերսիա և ինտրովերսիա** (ընդգծ.՝ **Թ. Ա.**) հասկացությունները<sup>11</sup>, որը օգնել է բացատրելու կերպարի՝ հասարակական միջավայրում ընկճված և մեկուսացված լինելու հանգամանքները: Կերպարների վարքագծային վերլուծության համար կիրառվել է դիմանկարը՝ սոցիալ-հոգեբանական, ազգային շերտերով, որը օգնել է ամբողջացնելու բնավորության հոգեբանական նկարագիրը<sup>12</sup>:

Կերպարակերտման ժամանակ Բաշայանը հաճախ դիմել է առարկայական միջավայրի, բնության երևույթների նկարագրությանը, որոնք դարձել են հոգեբանական թափանցումներ կատարելու միջոց: «Մարդու տունը նրա իսկ արտահայտությունն է. պատկերելով այն՝ կպատկերեք նաև նրա տիրոջը»<sup>13</sup>:

Գրողը նաև ընդգծել է ազգային հատկանիշների, գենետիկ հիշողության դերը, որը իր հերթին նպաստել է բացահայտելու կերպարների հոգեբանության ենթագիտակցական շերտերը, որտեղ կարևոր նշանակություն են ստացել հիշողության մեջ պահվող արքեստիպերը: Այս առումով հետաքրքիր հոգեբանական շերտեր ենք նկատել «**Տերտերին ուխտը**» գործում, որտեղ Ակոբի ծնողների՝ որդուն գենքից կտրելու տևական ջանքերի գործադրումը բացատրվել է մարդու կոլեկտիվ անգիտակցականում պահվող Ստվերի արքեստիպի գոյությամբ<sup>14</sup>, նկարագրական պատկերներում առանձնացվել է ամբոխային հոգեբանության պատկերումը՝ որպես առանձին անհատներից բաղկացած «զանգված»<sup>15</sup>: Այն

---

<sup>11</sup> Տե՛ս Юнг К., Лекции в клубе «Зофингия». Аналитическая психология. Семинары, Москва, Клуб Касталия, 2018, ст. 210.

<sup>12</sup> Տե՛ս Ավետիսյան Զ., Գրական ստեղծագործության հոգեբանություն, Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2011, էջ 81-84:

<sup>13</sup> Ուելլեք Ռ., Ուորրեն Օ., Գրականության տեսություն, Երևան, Սարգիս Խաչենց.Փրինթինգ 2008, էջ 327:

<sup>14</sup> Տե՛ս Հովականյան Յու., Հոգեվերլուծական փիլիսոփայություն (Ֆրոյդ, Յունգ, Ֆրոմ), Երևան, Հեղինակային հրատարակչություն, 2001, էջ 65-68:

<sup>15</sup> Տե՛ս Лебон Г., Психология масс. [http://loveread.ec/read\\_book.php?id=48103&p=4/11.09.2020](http://loveread.ec/read_book.php?id=48103&p=4/11.09.2020)

հիմնավորվել է Գ. Լը Բոնի և Զ. Ֆրոյդի՝ ամբոխային հոգեբանության մասին դատումներով:

Իրականության և երևակայության փոխներգործության դաշտում են քննվել «Լտուտ», «Կաղանդ» գործերը: «Լտուտ-չեքլեմախի՞» բառի իմաստային խտացմամբ գրողը ստեղծում է զգայությունների, ներքին ապրումների հոսք, ինչը խախտում է իրականության և երևակայության միջև գոյություն ունեցող տարանջատումը: «Կաղանդ» նորավեպում երագի ու երևակայության միաձուլման արդյունքում հեղինակը հայտնվում է իրեն շատ ծանոթ մի երկրում, որտեղ իրականում գուցե նա չի եղել, բայց որի յուրաքանչյուր քարը, թուփը, աղբյուրը իրեն հարազատ են. «Ո՞րն է այս երկիրը: Երբեք եղած չեմ հոս, բայց անծանոթ չե՛ս ան ինձի: Տեսնելից կճանչնամ զայն իսկույն, սիրտս անոր կերթա մեկեն. ընտանի սիրտ, ներքին բան մը կա անոր ու իմ մեջ...»<sup>16</sup>:

Իրականության և երևակայության հարաբերության դաշտում սկիզբ են առնում անգիտակցականում պահվող արխետիպերը. Մեծ Մոր առասպելական կերպարը, որ իր մեջ կրում է նահապետական գյուղի ողջ փիլիսոփայությունը, գրված-զգրված օրենքները, մթնշաղին ջրի գնացող կանայք, ովքեր իրենց հետ հատիկ են տանում և նետում ջուրը՝ «...քնության մեծ ամուսնությունը կատարող բեղմնավորման մեծ խորհուրդը տոնող քրնուիկներու պաշտամունքով մը»<sup>17</sup>, կաղանդչեքից անմասն չմնացող գոմշուկը, որը, ըստ հին հայկական սովորության, ընկավում է իբրև ընտանիքի անդամ:

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ուսումնասիրությունը հանգեցրել է հետևյալ եզրակացություններին.

1. 19-րդ դարի 80-ական թվականները նշանակալից ժամանակահատված էին արևմտահայ գրական կյանքում՝ առավելապես առաջադիմական մամուլի («Մասիս», «Արևելք», «Հայրենիք») հիմնադրման և նրա ստանձնած դերակատարության կարևորությամբ: Ուշագրավ է, որ հենց պարբերական մամուլն իր էջերում տեղավորեց արևմտահայ իրապաշտ գրողների՝ պատկերավորման «կյանքը ինչպես որ է» սկզբունքի գեղագիտական և գաղափարական մոտեցումներով արժևորված ստեղծագործությունները:
2. Արևմտահայ իրապաշտական շարժման համապատկերային դիտարկմամբ կարևորվեց Բաշալյանի դերակատարությունը հատկապես արևմտահայ առաջադիմական պարբերական մամուլի հրատարակումներում: Ա. Արփիարյանի համբավը, այդ պարբերականների գլխավոր խմբագիր լինելու հանգամանքը հաճախ ստվերում էր Բաշալյանի դերը և կատարած գործը: Սակայն, ակնհայտ է, որ Բաշալյանն էր այդ պարբերականների գրական մասի պատասխանատուն և օգնական խմբագիրը, նրա

<sup>16</sup> Բաշալյան Լ., Ընտիր երկեր, Երևան, Հայպետհրատ, 1962, էջ 228:

<sup>17</sup> Նույն տեղում, էջ 232:

հավանությամբ էին երիտասարդ, սկանակ գրողների գործերը հրատարակվում նշված պարբերականներում: Այս մասին են վկայում Ա. Չոպանյանը, Ե. Օտյանը և ուրիշներ:

3. Կ. Պոլսի պարբերական մամուլում տարբեր գրական ստեղծագործությունների շուրջ գրողի հեղինակած բազմաթիվ գրական-տեսական հոդվածները («1885 տարին Թուրքիոյ հայ գրականութեան համար», «Գրական կեանք», «Եփեսոսի մանկանց ութերորդը», «Կեղծ գրականութիւն», «Խոհարար եւ վիպասան» և այլն), որոնք սթափ և անաչառ գրչի արդյունք են, խոսում են Բաշայանի՝ ժամանակի գրական կյանքում ունեցած կարևոր դերակատարության մասին: Նշված հոդվածներում Լ. Բաշայանը անդրադառնում էր ոչ միայն արևմտահայ, այլև արևելահայ գրական զարգացումներին:
4. Լ. Բաշայանի հոդվածներում, տարբեր գործերի առիթով գրախոսականներում նկատվում են արևմտահայ իրականության մեջ կյանքի և ընկերության պահանջներն արտահայտող գրականություն ունենալու անհրաժեշտության շուրջ գրողի մոտեցումները, որոնք պետք է իրականացվեին միջավայրի, բարքերի, սովորույթների, մարդկային բնավորությունների և զգացմունքների մանրակրկիտ ուսումնասիրությամբ: Ըստ գրողի՝ նոր գրականության գեղագիտական և գաղափարական սկզբունքներին պետք է առաջին հերթին մոտենալ հենց այս դիտանկյունից:
5. Արևմտահայ իրականության մեջ կարևոր էր 1891-1895թթ. հրատարակվող «Հայրենիք» օրաթերթի դերակատարությունը: «Հայրենիք»-ում Բաշայանի հեղինակած հոդվածներից շատերը, ակնարկները, «Օրը օրին» քրոնիկների շարքը լայն պատկերացում են տալիս ժամանակի գրական և հասարակական կյանքի մասին: «Միջերկրականի հիշատակներ», «Արմաշի ուխտագնացությունը» ուղեգրությունների առանձին հատվածներ, «Ջարթոնք», «Աղավնիներ» նորավեպերը գեղարվեստական արժեք են ներկայացնում:
6. Նշանակալից է եղել Լ. Բաշայանի ներդրումը «Նոր կյանք» պարբերականի հրատարակման գործում: Նրա էջերում Բաշայանը հեղինակել է ժամանակի հասարակական և քաղաքական կյանքին վերաբերող բազմաթիվ հոդվածներ, որոնցում ընդգծվել է նրա դիրքորոշումը մեծ տերությունների վարած արտաքին քաղաքականության հանդեպ: Հետաքրքրական են հատկապես «Կաղանդ» նորավեպը, «Հայրենի հողը», «Հայ ցեղը» հոդվածները, որոնցում ընդգծված արտահայտություն են ստանում գենետիկ հիշողության, ցեղային հատկանիշների շուրջ գրողի խորհրդածությունները:
7. Լ. Բաշայանի խմբագրությամբ Փարիզում 1928-32 թթ. լույս տեսած «Լը ֆուայե» («Օջախ») ֆրանսերեն-հայերեն պարբերականի ուսումնասիրությունը հնարավորություն տվեց պատկերացում կազմելու, թե երկարատև



գրական դադարից հետո ինչ գաղափարական ու գեղագիտական փոփոխություններ են նկատվել գրողի գրական հայացքներում:

Թեև Բաշալյանն այդ պարբերականում գեղարվեստական երկեր չի հրատարակել, բայց տպագրվել են ֆրանսահայ գրական-հասարակական կյանքի մասին նրա հոդվածներն ու գրախոսականները, որոնք ցայսօր անմատչելի են եղել:

8. Լ. Բաշալյանի՝ իրապաշտական գրականության շուրջ տեսական մոտեցումները արտահայտվեցին նաև նրա գեղարվեստական արձակում՝ նորավեպերում և պատմվածքներում: Սոցիալական հակասությունների շեշտադրման հիմքի վրա են քննվել գործերից մի քանիսը («Դրացուհին», «Երկու կիներ», «Կաղանդչեքը», «Զարթոնք», «Շալը», «Նոր Զգեստը», «Նաչախճին» և այլն)՝ ազգային և համամարդկային վիճակների դիտարկմամբ: Դասակարգային անհավասարության, դրամատիրական միջավայրի ծնած աղտոյի բարքերի նկարագրությանն ենք հանդիպում մի շարք գործերում («Ա՛յս է եղեր», «Անժել», «Վերջին համբույրը»): Բաշալյանը ընդգծում է սոցիալական չարիքի դերակատարությունը, ընդվզում դրամատիրական միջավայրում մարդկային ճակատագրերի խեղաթյուրման դեմ:
9. 19-րդ դարավերջին Օսմանյան Թուրքիայի՝ քրիստոնյա ժողովուրդների, հատկապես հայերի նկատմամբ վարած բռնատիրական քաղաքականությունը տնտեսապես թուլացնում էր գավառում ապրող հայ գյուղացուն, ով ճարահատ լքում էր հայրենի գյուղը և շտապում բախտ որոնելու մեծ քաղաքներում: Այս ամենը իրենց գեղարվեստական մարմնավորումը ստացան արևմտահայ ութսունականների գործերում: Բաշալյանի արձակում նկատվում են պանդխտության պատճառների և դրանց դեմ պայքարելու միջոցների որոնման փորձեր:
10. Բաշալյանի կերպարային համակարգում բացահայտվում են հետաքրքիր հոգեբանական շերտեր: Հերոսների մի մասի հոգեբանության, վարքագծի վրա նկատելի է հասարակական միջավայրի ազդեցությունը, ինչը նրանց դարձնում է խեղճ ու կամազուրկ: Նկատվում է նաև հակազդեցություն միջավայրին, որը պայմանավորված է հերոսների անձնային հատկանիշներով, բնավորության ամուր գծերով: Զգացվում են ազգային արժեքների գիտակցման, պայքարի միջոցով ազատության հասնելու միտումներ: Նկարագրական պատկերներում գրողի ապրումների, իրականության ընկալման ինքնատիպ եղանակների օգնությամբ բացահայտվում են հոգեբանական ավելի խորը շերտեր, խախտվում են իրականության և երևակայության սահմանները, տարածության ու ժամանակի զգացողությունը:
11. Լ. Բաշալյանը իր ոչ մեծաքանակ գեղարվեստական արձակով, բայց ժամանակի պարբերական մամուլում սփռված մեծաքանակ գրական, հրապարակախոսական հոդվածներով կարևոր դերակատարություն ունեցավ 80-ականների իրապաշտական շարժման մեջ: Հրատարակվող նոր գե-

ղարվեստական գործերն ու նրանց հեղինակներին փորձեց արժևորել իրեն հատուկ գրական խղճմտանքով, արձագանքեց հայ հասարակական կյանքում կատարվող իրողություններին՝ իր միտքն ու գրիչը ծառայեցնելով հայ գրականությանն ու հայ ժողովրդին:

## **ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԵՆ ՀԵՂԻՆԱԿԻ ՀԵՏԵՎՅԱԼ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐՈՒՄ**

1. **Անդրեասյան Թ.**, Կնոջ կերպավորումը Լևոն Բաշալյանի արձակում, «Կանթեղ» (գիտական հոդվածներ), թիվ 4 (61), Երևան, 2014, էջ 1-17:

2. **Անդրեասյան Թ.**, Միֆական ու այլաբանական տարրերը Լևոն Բաշալյանի ուշ շրջանի գործերում, «Մխիթար Գոշ» (գիտական հոդվածներ), թիվ 2 (45), Վանաձոր, 2016, էջ 268-272:

3. **Անդրեասյան Թ.**, «Սոցիալական խնդիրներով պայմանավորված՝ մարդկային ճակատագրերի խեղաթյուրման հարցերը Լևոն Բաշալյանի գործերում», «Բանբեր Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանի», ամսագիր, թիվ 1 (42), Երևան, 2017, էջ 83-95:

4. **Անդրեասյան Թ.**, «Լևոն Բաշալյանը և Կ. Պոլսի «Հայրենիք» օրաթերթը (1891-1895)», «Բանբեր Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանի», ամսագիր, թիվ 1(46), Երևան, 2018, էջ 19-35:

5. **Անդրեասյան Թ.**, «Հայ գրական և հասարակական կյանքը Լևոն Բաշալյանի «Լը ֆուայե» («Ակուբ») ֆրանսերեն-հայերեն երկշաբաթաթերթի էջերում», «Էջմիածին», ամսագիր, օգոստոս, թիվ Ը, էջմիածին, 2020, էջ 113-122:

6. **Անդրեասյան Թ.**, Արշակ Չոպանյան և Լևոն Բաշալյան. մի քանի գործերի զուգահեռ քննություն», «Բանբեր Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանի», ամսագիր, թիվ 1 (54), Երևան, 2020, էջ 206-216:

## АНДРЕАСЯН ТАМАРА

### ЛЕВОН БАШАЛЯН В ПАНОРАМЕ ЗАПАДНОАРМЯНСКОГО ЛИТЕРАТУРНОГО ДВИЖЕНИЯ 80-Х ГОДОВ

Диссертация на соискание ученой степени кандидата филологических наук по специальности 10.01.01 - “Классическая армянская литература”

Защита диссертации состоится 30-го июня 2021 г. в 12<sup>00</sup> часов на заседании действующего в ЕГУ специализированного совета 012 ВАК по литературоведению.

Адрес: г. Ереван, 0025, ул. Абовяна 52<sup>а</sup>, ЕГУ, корпус факультета армянской филологии, аудитория 202.

#### Резюме

**Актуальность темы:** 80-ые годы 19-го века выделяются особой значимостью в западноармянской интеллектуальной жизни в связи с происходящей борьбой за новые взгляды и выражающую насущную правду реалистичную литературу. Интеллектуалы, известные под именем “западноармянское литературное поколение 80-х годов”, и своими статьями по литературной критике и теории, и своей художественной литературой противопоставлялись идеалистической, эмоциональной литературе и идейным подходам старого поколения. Одним из выдающихся лиц данного поколения является Левон Башальян, жизнь и работа которого до сих пор представлены всего лишь двумя монографиями и несколькими статьями. Всецело не исследованы публицистические, литературно-теоритические статьи, распространенные в периодической печати. Многие работы, имеющие литературную ценность, не нашли места в опубликованных до нашего времени собраниях писателя. Данная диссертация актуальна, поскольку работа представляет Л. Башальяна в панораме западноармянского реалистического движения 80-х годов и является попыткой выражения полноценного научного слова об авторе, что расширит представления о художественных развитиях одного важного периода истории нашей литературы.

**Цель и задачи исследования:** Цель и задачи исследования – представить роль Л. Башальяна в рамках западноармянского реалистического литературного движения, выделить влияние историческо-политических событий на западноармянские идейные взгляды 80-х годов, изучить и характеризовать особенности реалистичной литературы, проявления данной литературы в прозе Л. Башальяна, сравнивая работы писателя с произведениями иных представителей реалистического поколения.

**Научная новизна диссертации:** Новизной работы является панорамный анализ литературной деятельности Л. Башаляна, который был проведен на основе литературоведческих и публицистических статей писателя в периодической печати и сопоставительного изучения художественных произведения писателя в сравнении с подобными работами иных представителей поколения. В данной работе впервые исследуется опубликованный под редакцией Л. Башаляна в Париже в 1928–32-х годах периодический журнал “Ле Фуайе”. Научной новизной работы также является попытка художественного и идейного анализа работ писателя с применением современных литературоведческих взглядов.

**Методология работы:** В течение проведения исследования были применены историко-сравнительные, типологические, контекстные и образные, психоаналитические методы, основываясь на достижениях армянского и зарубежного литературоведения и имеющихся мнениях.

**Структура работы:** Работа состоит из Введения, разделенные на соответствующие подразделы двух основных глав, заключения и списка использованной литературы.

Во **Введении** мы представили историю вопроса и необходимость панорамного исследования произведений Левона Башаляна, выделили актуальность, цель и проблемы, научную новизну, методологическую основу работы, определили теоретическую и практическую значимость работы.

**Первая глава (“Левон Башалян в рамках западноармянского научного движения 80-х годов”)** имеет два подраздела и посвящена литературной, общественной деятельности Л. Башаляна в Константинополе (“Аревелк”, “Масис”, “Айреник”), в Лондоне (“Нор кянк”) и в Париже (“Ле Фуайе”). В данных периодических журналах Л. Башалян является автором многих литературных-теоритических, публицистических статей, новелл и рассказов, хроники, путевых очерков, исследованием которых мы подчеркнули роль писателя в западноармянском литературном движении 80-х годов.

**Вторая глава (“Социально-психологические акцентирования в произведениях 80-х годов”)** имеет 4 подраздела, где представляются наблюдаемые в прозе Башаляна социальные акцентирования, классовое неравенство и тема чужбины. Параллельно представляется развитие вопроса в работах иных западноармянских писателей 80-х годов (А. Арпиарян, Г. Зограп, Т. Камсаракан, Сипил (Запел Асатур), А. Чопанян, Гранд (Мелкон Кюрджян) и другие). В образной системе Башаляна выделяются интересные психологические слои. С целью осуществления психологического глубокого анализа был пользован опыт психоанализа, ссылаясь на взгляды З. Фрейда, К. Юнга.

В **Заключении** обобщаются основные результаты научного исследования.

Работа состоит из 158 страниц.

**TAMARA ANDREASYAN**

**LEVON BASHALYAN IN THE PANORAMA OF THE 80S ARMENIAN LITERARY MOVEMENT**

Dissertation for acquiring Philological science degree. Field of specialization: 10.01.01 – Armenian classical literature.

The defense of the dissertation will take place on June 30, 2021 at 12:00 at the HQC of RA's Specialized Council 012 of "Literature Studies" in Yerevan State University.

Address: 0025, Yerevan, Abovyan st. 52/A, YSU, 8<sup>th</sup> building, Faculty of Armenian Philology, room 202.

**SUMMARY**

**The modernity of the theme:** The 80s of the 19<sup>th</sup>- century were important because of the struggle for realistic literature which expressed new ideas and vital truths in west-armenian intellectual life. The famous intellectuals who bore the name "West-Armenian literary generation of the 80s" contrasted ideological, sensational literature and ideological approaches of the old generation by both literal-critical articles and fiction theoretically. Levon Bashalyan is an outstanding figure of that generation, but until now there are only two monographies and some articles presenting his life and activity. Bashalyan's publicizing, literary-theoretical articles which were spread in periodicals have not been completely investigated yet. A great number of works having artistic value have been excluded from the writer's collections that have been published up to now. This dissertation is modern, as it represents L. Bashalyan in the panorama of the 80s west-armenian realistic movement and it's an experiment of a complete scientific say about this author. It will expand the notion about the artistic development of a very important period of the history of our literature.

**Aims and main tasks of the research:** The goal and main tasks of the investigation are to show L. Bashalyan's role in west-armenian realistic literary movement, to distinguish the influence of the historical-political events on 80s west-armenian ideological views, to examine and characterize the peculiarities of realistic fiction, and their expression in L. Bashalyan's prose in comparison with artistic works of other representatives of the realistic generation.

**The scientific novelty of the dissertation:** The novelty brought in the work is the panoramic analysis of L. Bashalyan's literary activity. It was realized by putting in parallel examination the artistic works of the writer (publicizing and historical-literary articles, spread in periodicals) and the such-like works of other representatives of that generation. For the first time this work refers to the periodical "Le Fauey", which was edited by L. Bashalyan and published from 1928 to 1932. The scientific novelty of the work is also the ideological and artistic analysing

experiment of the writer's works using modern literal-historical views.

**The methodology of the work:** While doing research the following methods were used based on modern opinions and the achievements of Armenian and Foreign histories of literature: historical-comparative, typological, contextual-portrayal, psycho-analysing.

**The structure of the dissertation:** The work consists of introduction, two main chapters with corresponding subchapters, conclusion and the list of the literature used.

**Introduction:** We've reflected the history of the subject in it, the necessity of panoramic observation of Bashalyan's works, we've given reasons for the modernity, aim and the principal problems, scientific novelty, methodological base of the work and we've pointed to its practical and theoretical significance.

**The first chapter ("Levon Bashalyan in the radius of the 80s west-armenian literary movement")** includes two subchapters dedicated to L. Bashalyan's literary and social activities in Constantinople ("Arevelq", "Masis", "Hayrenik" ), in London ("Nor Kyank"), and in Paris ("Le Fauye"). In those periodicals Bashalyan was the author of many literal-theoretical, publicizing articles, short stories, chronics, travelling notes. By examining them we have emphasized the writer's role in the 80s west-armenian literary movement.

**The second chapter (Social-psychological emphases in the 80s works)** includes four subchapters where we discuss the following themes observed in Bashalyan's prose: social emphases, class-inequality, emigration. The excitations of the matter are given parallelly with the works of other 80s west-armenian writers (A. Arpiaryan, G. Zohrap, T. Kamsarakan, Sipil (Zapel Asatour), A. Chopanyan, Hrand (Melkon Kurtjyan and others). In Bashalyan's character system the interesting psychological layers are separated. To do deep, psychological analyses of the characters psycho-analysis was used citing Z. Freud's and K. Yung's views.

In the section of **Conclusion** I've summarized all main and essential results that have been generalized during the scientific research due to modern attitudes.

The total volume of the dissertation comprises 158 pages.

